# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 154-Լ**
**04 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021Թ**

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 73 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N1064-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 4–ի «Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության մարզային համակարգի ստեղծման և գործունեության ապահովման մասին» N 153 որոշումը՝

Որոշում եմ

1.Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային,

քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետի վրա:

10/5/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ